

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆՈՒՄ

Այս տարվա օգոստոսի վերջին Պետական գիտա-տեխնիկական կոմիտեոմ կայացավ ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունների և գերատեսչությունների մասնագետների արտասահմանյան գործուղումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների քննարկումը: Հաշվետվությունների քննարկմանը մասնակցեցին համապատասխան ճյուղերի արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչները:

Ընկ. ընկ. Ա. Խ. Բաբայանի (Երևանի դերմատինա-մոմլաթային ֆաբրիկայի դիրեկտոր), Ա. Պ. Խաղանովի (Լենինականի տեքստիլ կոմբինատի գլխավոր ինժեներ) և Յու. Մ. Խոջայանի (Ֆեհիկա-ի էլեկտրական ապարատների և ավտոմատիկայի բաժնի՝ պետ) հաշվետվությունները հավանություն գտան ինչպես ռեցենզենտների, նույնպես և քննարկմանը ներկա գտնվող մասնագետների կողմից:

Ընկ. Բաբայանը ներկա գտնվողներին ծանոթացրեց Չեխոսլովակյան ռեսպուբլիկայում առանց գործվածքային հենքի պոլիվինիլբլորիդային խեփից ստացվող փափուկ պլաստիկատների և լինոլեոմի արտադրությանը: Ձեկուցողը մանրամասնորեն կանգ առավ Երևանի դերմատինա-մոմլաթային ֆաբրիկայում պլաստիկատների արտադրությունը յուրացնելու ժամանակ իր կողմից ուսումնասիրված փորձի արդյունքներն օգտագործելու հարցի վրա: Նա նշեց, որ նոր տեխնոլոգիայի համաձայն, ֆաբրիկան արդեն թողարկել է 50 հազ. մ պոլիվինիլբլորիդային թաղանթ: Ձեկուցողը հարց դրեց ռոտացիոն մամլիչ ձեռք բերելու անհրաժեշտության մասին, առանց գործվածքային հենքի լինոլեոմի արտադրություն կազմակերպելու համար:

Ընկ. Խաղանովի հաշվետվությունը նվիրված էր Չեխոսլովակիայի տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունների աշխատանքի անալիզին: Մնացուկներն օգտագործելու տեսակետից նա այդ ձեռնարկությունները ստորաբաժանեց երեք խումբի. ա) ձեռնարկություններ, որոնք տալիս են մնացուկներ, բ) ձեռնարկություններ, որոնք հավաքում, տեսակավորում և վերամշակում են մնացուկները և գ) ձեռնարկություններ, որոնք աշ-

խատում են մնացուկների հումքով: Չեխոսլովակիայի տեքստիլ արտադրության մնացուկներն օգտագործող այդ ձեռնարկությունների աշխատանքի ուսումնասիրությունը ընկ. Խաղանովին թույլ տվեց անել մի շարք արժեքավոր առաջարկություններ՝ մեր արդյունաբերության մեջ այդ փորձն օգտագործելու համար:

Ելույթ տնեցող ընկերները նշեցին առաջադրված առաջարկությունների ակտուալությունը և բարձր գնահատական տվեցին ընկ. Խաղանովի հաշվետվությանը:

Խորհրդակցությունը ՊԳՏԿ-ին խնդրեց առանձին բողոքով հրատարակել ընկ. Խաղանովի հաշվետվությունն ու առաջարկությունները՝ ռեսպուբլիկայի տեքստիլ արդյունաբերության մնացուկների օգտագործումը կազմակերպելու համար:

Դյուսելդորֆում կազմակերպված միջազգային կոնգրեսի և շախիչ տեխնիկային նվիրված ցուցահանդեսի մասին տրված հաղորդման մեջ ընկ. Խոջայանը նշեց, որ կոնգրեսում արված զեկուցումներն ու հաղորդումները հանրամատչելի-ինֆորմացիոն բնույթ էին կրում և սպասելի արդյունքները շտվեցին: Ոստի սովետական պատվիրակության հիմնական ուղարկությունը նվիրված էր ցուցահանդեսում ցուցադրված ապարատուրայի ուսումնասիրությանը: Ընկ. Խոջայանը նշեց, որ Դյուսելդորֆում եղած ժամանակ ինքը և պատվիրակության բոլոր մասնակիցներն ուսումնասիրել են ներկայացված ապարատուրայի որոշակի խումբը: Այնուհետև նա հաղորդեց, որ ցուցադրված գործիքների մեծ մասը մեր արդյունաբերության թողարկածներից տարբերվում է լոկ կոնստրուկտիվ կատարմամբ, ուստի հաշվետվության մեջ մտցվել են միայն այն գործիքները, որոնք հատուկ հետաքրքրություն են ներկայացնում օրիգինալության և երանց կոնստրուկցիայում լինող նվազ լուծումների նորության տեսակետից:

Խորհրդակցությունը դրական գնահատական տվեց հաշվետվությանը, ՊԳՏԿ-ին խնդրեց ուսումնասիրել ընկ. Խոջայանի առաջարկությունները և սարքաշինական գործարաններին համա-

պատասխան օգնութիւնն ցուց տալ փոքր գա-
բարիտային տրանսֆորմատորներ, տրանզիստո-
րային կաբելափնտրիչներ, պորտատիվ օհմա-
չափներ, գործիքների լուսային գրանցիչներ յու-
րացնելու և թողարկելու համար, ինչպես նաև
մշակել կոնստրուկտորական բյուրոներին կից
էքսպերիմենտալ բազաների կազմակերպման մի-
ջոցառումները՝ ոչ ստանդարտային ապարատու-
րայի արտադրութեան համար:

Խորհրդակցութեանը ցանկութեան հայտնեց
մեր պատվիրակութիւնից ստանալ Գերմանական
Ֆեդերատիվ Ռեսպուբլիկա կատարած ուղևորու-
թեան մասին կազմված լրիվ հաշվետվութեանը՝
ռեսպուբլիկայի մասնագետների լայն շրջանին
ծանոթացնելու համար:

Այնուհետև լավեցին Կոշիկի № 3 ֆաբրիկայի
դիւստրի ինժեներ Գ. Խ. Հարութեանյանի հաշ-
վետվութեանը՝ Չեխոսլովակիան ռեսպուբլիկա-
յում տեքստիլ հենքով պոլիլինիլըլորիդային խե-
ծերից կաշվի փոխարինիչների, ինչպես նաև իմի-
տացված կաուչուկային ներքանի և կոշտ պլաս-
տիկ կաշվի արտադրութեան հետ ծանոթանալու

մասին, և Երևանի գարեջրի № 1 գործարանի
գլխավոր ինժեներ S. Մ. Կարապետյանի հաշ-
վետվութեանը՝ Մյունխենում կազմակերպված
Գարեջրագործական և զինեգործական արդյունա-
բերութեան սարքավորման միջազգային ցուցա-
հանդեսի մասին:

Քննարկվեց նաև Հայկական ՍՍՌ Պետպլանի
ավագ ինժեներ ընկ. է. Ս. Պողոսբեկովի հաշվե-
տվութեանը՝ Ջագրեբի միջազգային արդյունաբե-
րական տոնավաճառ այցելութեան մասին:

Քննութեան առնելով հիշյալ հաշվետվութեան-
ները, խորհրդակցութեանը նշեց, որ անհրաժեշտ
է բազմակողմանիորեն ուսումնասիրել և ուսցիո-
նալ ուղիներ փնտրել՝ հաշվետվութեաններում
առաջադրված առաջարկութեաններն օգտագործե-
լու համար:

Մանրոքայում. Արտասահման կատարած գոր-
ծուղումների հաշվետվութեաններին կարելի է ծա-
նոթանալ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովե-
տի ՊԳՏԿ-ի գիտատեխնիկական ինֆորմացիայի
բաժնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՏՆՏԵՈՐՀԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԳԵՐՈՒՄ

Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսութեան
փորհրդի ձեռնարկութեանները 1958 թվականի ա-
ռաջին կիսամյակում արտահանմանի համար ար-
տադրել են 100-ից ավելի տարբեր արդյունաբե-
րական արտադրանքներ:

Հիմնականում արտահանվում են էլեկտրամե-
քենաշինական, սարքաշինական, մեքենաշինական,
քիմիական արդյունաբերութեան և գունավոր մե-
տալուրգիայի ձեռնարկութեանների արտադրանք-
ներ: Մեծ տեսակարար կշիռ է զբաղում նաև սը-
նընդի արդյունաբերութեան արտադրանքը:

Հայաստանի ձեռնարկութեանների արտադ-
րանքն արտահանվում է ինչպես արևելյան նվ-
որպայի, այնպես էլ Ասիայի բոլոր սոցիալիստա-
կան երկրները: Սակայն արտահանման ուղղու-
թեանը չի սահմանափակվում լոկ սոցիալիստա-
կան երկրներով: Հայկական տնտեսական վարչա-
կան շրջանի ձեռնարկութեանների մարկան կրող

մեքենաներ, սարքավորում, գործիքներ և այլ ապ-
րանքներ ուղարկվում են նաև կապիտալիստա-
կան շատ երկրներ, Մերձավոր և Միջին Արևելքի
տնտեսապես թույլ զարգացած երկրները՝ Արա-
բական Միացյալ Ռեսպուբլիկա (Եգիպտոս, Սի-
րիա), Աֆղանստան, Իրան, Պակիստան և Հարավ-
արևելյան Ասիա՝ Հնդկաստան, Ինդոնեզիա, Բիր-
մա, Կամբոջա, արևմտյան երկրները՝ Բելգիա,
Արգենտինա, Մեքսիկա, Չիլի և այլուր: Ընդամե-
նը 20 կապիտալիստական երկրներ:

Հայաստանից արտահանվում են փոխադրովի
էլեկտրակայաններ, զենքատորներ, էլեկտրա-
մոտորներ, կառավարման վահաններ, սնման ազ-
րեքատներ, ուժային տրանսֆորմատորներ, եռա-
կցման տրանսֆորմատորներ, ամեն տեսակի ճըշ-
գրիտ էլեկտրական գործիքներ, կոմպրեսորներ և
պոմպեր, ավտոմոբիլային պահեստամասեր, ժա-
մացույց-զարթուցիչներ, սննդի արդյունաբերու-